

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռիս Գերագույն Հոգևոր Խորհուրդը, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, 2 նոյեմբեր 1984-ի իր նիստում, անդրադառնալով Մայր Աթոռիս և Տանն Կիլիկիո Աթոռի հարաբերություններին, ողջունելի գտավ 1984 թվականի հունիսի 13—15-ը Փարիզում եղբայրական հանդիպումը Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի և Տ. Տ. Գարեգին Բ Տանն Կիլիկիո կաթողիկոսի միջև և հույս հայտնեց, որ ստեղծված փոխադարձ սիրո և փոխըմբռնման մթնոլորտում, հետագա բանակցություններով ու հանդիպումներով հնարավոր կդառնա կարգավորումը և բարեհաջող լուծումը գոյություն ունեցող եկեղեցական տագնապի: Սույն նիստում Վեհափառ Հայրապետը բանաձևեց Մայր Աթոռիս առաջադրանքը ի խնդիր հայ սփյուռքի եկեղեցական տագնապի վերացման, որ հրապարակում ենք ի գիտություն մեր եկեղեցական կենտրոններին և հավատացյալ ժողովրդյան:

«Նախախնամողն Աստուծո ողորմությամբ, Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալների քարոզության հիման վրա, 301 թվականին կազմավորվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին Սուրբ Գրիգոր Լուսավորչի ձեռամբ և հաստատվեց Հայոց Հայրապետական Աթոռը Արարատյան աշխարհ ի Ս. Էջմիածին:

Քաղաքական ծանոթ պատճառների հետևանքով, Հայոց Հայրապետական Աթոռը ժամանակավորապես ստիպվեց տեղափոխվել և հաստատվել այնտեղ, ուր հաստատվել էին Հայոց Պետական Իշխանությունները: Այսպիսով Ամենայն Հայոց Հայրապետները իրենց Աթոռը հաստատեցին նաև Կիլիկիա, հայկական կիլիկյան թագավորության շրջանին: Երբ Կիլիկյան հայկական պետությունը քայքայվեց ու վերացավ, Հայոց Հայրապետական Աթոռը վերադարձավ իր սկզբնական նստատեղին, Ս. Էջմիածին, 1441 թվականին: Այդ թվականից տարիներ անց կազմավորվեց Կիլիկյան Կաթողիկոսական Աթոռը իբրև տեղական Աթոռ Կիլիկիո շրջանի հայության համար: Այդ իրավիճակը գոյատևեց նաև Օսմանյան կայսրության ամբողջ շրջանին, մինչև առաջին համաշխարհային պատերազմ, մինչև Մեծ Եղեռն, որի հետևանքով Կիլիկյան Աթոռը ստիպվեց հեռանալ իր հայրենի հողից և մի քանի տարիներ անտուն մնալուց հետո, Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ Ե-ի հաճությամբ և Երուսաղեմի Պատրիարք Եղիշե Արքեպիսկոպոս Դուրյանի կարգադրությամբ, Կիլիկյան Աթոռի իրավասությանը փոխանցվեցին Դամասկոսի և Լիբանանի թեմերը, որպեսզի Կիլիկյան Աթոռը գոյատևի նոր պայմանների մեջ: Այսպիսով Կիլիկյան Կաթողիկոսական Աթոռը հաստատվեց Անթիլիաս, ունենալով իր իշխանության ներ-

քև Լիբանանը, Սիրիան և Կիպրոս կղզին, իբրև տեղական Կաթողիկոսական Աթոռ, իր ներքին ինքնավար կազմակերպությամբ, իր հատուկ կանոնագրությամբ: Այս պայմաններում, սկիզբ առավ համերաշխ գործակցության մի շրջան հայ եկեղեցական նվիրապետական կառույցի ծոցում, սիրալիր հարաբերություններով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի միջև: Այս օրինական իրավիճակը տևեց մինչև 1957 թվականը, որից հետո Տանն Կիլիկիո Աթոռը սկսեց իր իշխանությունը տարածել Ս. Էջմիածնի իրավասության ներքև գտնվող թեմերի վրա՝ Միացյալ Նահանգներում, Պարսկաստանում, Հունաստանում, Գարագասում (Հարավային Ամերիկա), ծնունդ տալով բոլորիս ծանոթ եկեղեցական տագնապալի կացության:

Ստեղծված տագնապը առավել խորացավ, երբ 1964-ից սկսյալ, Կիլիկյան Աթոռի կաթողիկոսը սկսեց իր Աթոռը նկատել հավասարապոր Ամենայն Հայոց Ընդհանրական Կաթողիկոսական Աթոռին:

Բնականաբար, տագնապը վերացնելու միակ հնարավոր ճանապարհը՝ վերացումն է՝ տագնապին տուն տվող բուն պատճառի: Հետևաբար, քսան և յոթ տարիներից ի վեր գոյատևող տագնապալի կացությունը հնարավոր կդառնա վերացնել, վերահաստատումովը մինչ 1957 թվականը գոյություն ունեցող օրինական իրավիճակի: Այս կերպով ինքնին կլուծվեն բոլոր հարցերը և կվերսկսի համերաշխ գործակցության մի նոր շրջան՝ Մայր Աթոռի և Կիլիկյան Աթոռի միջև, ու այլևս ոչ մի արգելք չի լինի, որ Մայր Աթոռի հավանությամբ, Ս. Էջմիածնի իրավասության ներքև գտնվող թեմերի մեջ, հովվական աշխատանքի կոչվեն նաև Կիլիկյան Աթոռի հոգևոր սպասավորները, մնալով հանդերձ միաբանները իրենց Աթոռի: Մեր առաքելական Մայր Եկեղեցին կվերագտնի իր միությունը:

Այս իրավիճակի վերահաստատումը ոչ միայն բնական է և անհրաժեշտ եկեղեցական կանոնական իմաստով՝ Հայ Առաքելական Եկեղեցու միությունը և մեկությունը պայմանավորող, այլ նաև հրամայական անհրաժեշտություն է՝ ի խնդիր արտասահմանի հայ հավատացյալ ժողովրդի միասնության ամրապընդման:

Հայրենի սրբական հողի վրա խարսխված Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետական Աթոռը՝ միակ կանոնական և իրական գերագույն հեղինակությունն է, որով կապահովվեն ու կնվիրագործվեն՝ Հայ Եկեղեցու միությունը և հայ հավատացյալ ժողովրդի ազգային միասնությունը: Մանավանդ, ինչքան ժամանակ հայ ժողովուրդը սփյուռք է ունենալու, հրամայական ճշմարտություն է պատմիչ Առաքել Դավրիժեցու պատգամը, թե՝ «Ի վերայ Աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կայ»:

Մեր իղձն ու հույսն է, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռների հետագա բանակցություններով, հնարավոր կդառնա գտնել կանոնական ու գործնական ուղիղ ճանապարհը ի խնդիր մեր եկեղեցական տագնապի վերացման»:

Այս հույսով ու համոզումով Մայր Աթոռիս դիվանը հրապարակում է սույն «Հայտարարություն»-ը ի գիտություն և ի մխիթարություն մեր Եկեղեցու ու մեր հավատացյալ ժողովրդի:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
9 նոյեմբեր 1984 թ.